

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով
Ո Ր Ո Շ ՈՒ Մ 56/3
13 հոկտեմբերի 2017թ.

Քննարկվեց Ա/Ձ Վահե Հարությունյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների ՀՏՎ 05.09.2017թ. N 2135739 ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների ՀՏՎ պետի 26.07.2017թ. N 2135739 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Վահե Հարությունյանի մոտ կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված), ինչպես նաև հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումներ: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների ՀՏՎ 05.09.2017թ. N 2135739 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 2.250.000 դրամ:

Նշվեց նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում փաստաթղթեր են ստացվել Ա/Ձ Վահե Հարությունյանի վերաբերյալ, որոնք անմիջականորեն առնչվում են սույն գանգատին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում նյութեր են նախապատրաստվում Ա/Ձ Վահե Հարությունյանի կողմից Ակտով արձանագրված խախտումները կատարված լինելու փաստի կապակցությամբ և անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, հետևապես ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ա/Ձ Վահե Հարությունյանի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ